ՎԴ/16291/05/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 փետրվարի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/16291/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 21-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Տիգրան Յուզբաշյանը 2024 թվականի դեկտեմբերի 23-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 21-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 23-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 210-րդ հոդվածի 1-ին մասին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հունվարի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում ներկայացված հայցադիմումով հայցվորը խնդրել է պարտավորեցնել պատասխանողին կատարելու որոշակի գործողություններ, այն է՝ հաշվարկել և վճարել Տիգրան Կարենի Յուզբաշյանի ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ*

ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանը շարունակում է քննել և լուծել միայն այն աշխատանքային վեճերը, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից մինչև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչելու մասին 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը, իսկ 2025թ. հունվարի 1-ից սկսած ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ քննելու և լուծելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ներկայացված հայցադիմումները, քանի որ դրանց քննությունը և լուծումն օրենսդիրը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, ուստի ներկայացված պահանջը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինել չի կարող»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 210-րդ հոդվածի 1.1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-69-րդ հոդվածներին, մինչև 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-220-Ն օրենքով կատարած փոփոխությունները գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունվարի 21-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Նախկինում վարչական դատավարության կարգով քննվող և ներկայումս քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա հայցատեսակը ըստ էության վիճարկման հայց է, քանի որ վիճարկվում է հանրային ծառայողի համար միջամտող վարչական ակտը՝ հանրային ծառայության անցնելու, այն*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 15-18:

իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական իրավական ակտը:

Քննարկվող հայցադիմումը ըստ էության գործողության կատարման հայց է, քանի որ դրա բովանդակությունից հետևում է, որ հայցվորը պահանջում է պարտավորեցնել պատասխանողին կատարելու որոշակի գործողություն՝ կապված զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին իրականացված ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելու և վճարելու հետ, որը չի ենթադրում բարենպաստ վարչական ակտի ընդունում:

Գտնում եմ, որ ՀՀ վարչական դատարանը ոչ ճիշտ եզրահանգում է կատարել գործի ենթակայության վերաբերյալ, ուստի դրա հասցեագրումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին հիմնավորված չէ:

(...)

Այն հանգամանքը, որ իրավահարաբերության կողմերից մեկը օժտված է հանրային իշխանական լիազորություններով, ակնհայտ է՝ պատասխանողը ՀՀ պաշտպանության նախարարությունն է:

Այն հանգամանքը, որ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, իմ գնահատմամբ, նույնպես ակնհայտ է՝ ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իշխանական լիազորությունների մեջ է մտնում նաև իր համակարգի ծառայողներին աշխատավարձ հաշվարկելը և վճարելը, այդ թվում՝ նաև ոչ աշխատանքային օրերին ծառայության մեջ ներգրավվելու հետ կապված:

Այն հանգամանքը, որ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ, նույնպես, իմ կարծիքով, ակնհայտ է՝ աշխատավարձ հաշվարկելու և վճարելու պարտականությունը ծագում է

զինվորական ծառայության անցնելու պահից, ինչը, աներկբայորեն, հանրային՝ պետության և հանրության անվտանգության ապահովման շահին է ուղղված:

Գտնում եմ, որ առկա են բոլոր վավերապայմանները՝ իրավահարաբերությունը որպես վարչաիրավական բնութագրելու և հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի քննությանը ուղարկելու համար»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/16291/05/24 գործն ըստ Տիգրան Յուզբաշյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 29-31:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած

դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի փոփոխման, լուծման, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը (այսուհետ՝ աշխատանքային վեճ)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ

օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասով նախատեսված հոդվածներն ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից, շարունակում են քննվել վարչական դատարանում, իսկ 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները քննվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով նախատեսված կանոններով»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանն է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ, 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն մինչև 2025 թվականի հունվարի 1-ը նշված վեճերով ներկայացված հայցադիմումները, որոնք արդեն իսկ վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից:

Այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ վարչական դատարանն իրավասու է քննելու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Տիգրան Յուզբաշյանը 2024 թվականի դեկտեմբերի 23-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին[3],

- ՀՀ վարչական դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում մինչև 2025 թվականի հունվարի 1-ը չի կայացվել,

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 3-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ վարչական դատարանը շարունակում է քննել և լուծել միայն այն աշխատանքային վեճերը, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից մինչև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչելու մասին 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից սկսած

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ քննելու և լուծելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ներկայացված հայցադիմումները, քանի որ դրանց քննությունը և լուծումն օրենսդիրը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, ուստի ներկայացված պահանջը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինել չի կարող[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունվարի 21-ի որոշմամբ գտել է, որ հայցադիմումը, ըստ էության, գործողության կատարման հայց է, քանի որ դրա բովանդակությունից հետևում է, որ հայցվորը պահանջում է պարտավորեցնել պատասխանողին կատարելու որոշակի գործողություն՝ կապված զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին իրականացված ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելու և վճարելու հետ, որը չի ենթադրում բարենպաստ վարչական ակտի ընդունում: Միաժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը գտել է, որ իրավահարաբերության կողմերից մեկն օժտված է հանրային իշխանական լիազորություններով, իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, և իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ[5]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով Տիգրան Յուզբաշյանի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ծագած վեճը Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ

[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելու և վերջինիս վճարելու վերաբերյալ է: Այսինքն՝ հայցադիմումով ներկայացված վեճը վերաբերում է հայցվորին ոչ աշխատանքային օրերին ծառայության մեջ ներգրավելու դիմաց վարձատրություն վճարելու վերաբերյալ ծագող աշխատանքային հարաբերություններին, որպիսի գործերը, անկախ հայցվորի կողմից ձևակերպված հայցապահանջից, 2025 թվականի հունվարի 1-ից սկսած, ենթակա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի այն դիրքորոշմանը, որ նախկինում վարչական դատավարության կարգով քննվող և ներկայումս քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա հայցատեսակը, ըստ էության, վիճարկման հայց է, քանի որ վիճարկվում է հանրային ծառայողի համար միջամտող վարչական ակտը՝ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական իրավական ակտը, իսկ քննարկվող հայցադիմումը գործողության կատարման հայց է, քանի որ դրա բովանդակությունից հետևում է, որ հայցվորը պահանջում է պարտավորեցնել պատասխանողին կատարելու որոշակի գործողություն՝ կապված զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին իրականացված ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելու և վճարելու հետ, որը չի ենթադրում բարենպաստ վարչական ակտի ընդունում, ապա հարկ է նշել հետևյալը.

Հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը մինչև 2024 թվականի մայիսի 2-ն ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ուժի մեջ մտնելը

վերապահված էին ՀՀ վարչական դատարանի քննությանը, քանի որ օրենսդիրը, չնայած տվյալ իրավահարաբերությունների աշխատանքային բնույթ կրելուն, դրանք ընդգրկել էր հանրային իրավահարաբերությունների տիրույթում՝ հաշվի առնելով այդ իրավահարաբերությունների սուբյեկտի՝ հանրային ծառայող լինելու հանգամանքը: Հետևաբար, անկախ ներկայացված հայցադիմումի առարկայի ձևակերպումից, վիճարկման հայցի առարկա դառնում էին նաև վարչական ակտ չհանդիսացող անհատական իրավական ակտեր՝ միայն այն փաստի հաշվառմամբ, որ օրենսդիրը նման վեճերի քննությունը վերապահում էր ՀՀ վարչական դատարանի քննությանը: Հետևաբար, այն պարագայում, երբ ներկա իրավակարգավորումներով 2025 թվականի հունվարի 1-ից նշված գործերի քննությունը վերապահվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը, որևէ էական նշանակություն չունի այն հանգամանքը, թե հայցադիմումով ինչպիսի ձևակերպմամբ է ներկայացվել հայցի առարկան, քանի որ անկախ հայցապահանջի բնույթից, նշված գործերով ներկայացված վեճերի քննությունն այսուհետ վերապահվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

12. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/16291/05/24 գործն ըստ Տիգրան Յուզբաշյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Տիգրան Յուզբաշյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/16291/05/24 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/16291/05/24 գործն ըստ Տիգրան Յուզբաշյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, այն է՝ Տիգրան Կարենի Յուզբաշյանի՝ ՀՀ ՊՆ-ում զինվորական ծառայության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածում ոչ աշխատանքային, հանգստյան օրերին ծառայության ներգրավելու համար վարձատրության գումարը հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ